ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք,

ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ.,
շ.1, Հեռ. (098)048046 , tumanyan.lori@mta.gov.am

N 130
18 հուլիս 2016թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու 2016թվականի հուլիսի 12-ի թիվ 43-48-Ա և 49-Ն որոշումները:

Առդիր՝ 19 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 43-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 12-ի նիստի օրակարգը.

1.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ՀՈՒԼԻՍԻ 12 –Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
3.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ 5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ
3. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 44-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել՝ի գիտություն Թումանյան համայնքի 2016 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը՝համամաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ
3. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
2016թ. հուլիսի 12-ի թիվ 44 - Ա որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2016թ–ի տարեկան բյուջեն երկրորդ եռամսյակում կատարվել է եկամուտների գծով՝ 94,0 %-ով, նախատեսված 52313.0հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 49199,4 հազ. դրամ: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 11313.5 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 8534.3 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 75.4%: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիաներ) նախատեսված 40929,5 հազ. դրամը տրվել են ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 39928,1 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%,այլ դոտացիան՝ 1001.4 հազ. դրամ, որը նույնպես տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0% :

1. Բյուջեի վարչական մասի եկամուտները

2016 թ-ի երկրորդ եռամսյակում բյուջեն վարչական մասով նախատեսված էր 52243.0 հազ. դրամ եկամուտ, փաստացի մուտքերը կազմել են 49129.4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 94.0 % : Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 11313.5 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 8534.3 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 75.4 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 40929,5 հազ. դրամը հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0%, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 39928,1 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%,այլ դոտացիան՝ 1001.4 հազ. դրամ, որը նույնպես տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0% :

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2016 թ-ի երկրորդ եռամսյակում նախատեսված էր 6116.3 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 2782.1 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 45.5 %: Նախորդ տարվա համեմատ հողի հարկի կատարման տոկոսը նվազել է:

2) Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված էր 185.0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 241.6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 130.6 %, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր գույքահարկ 3000.0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 3342.4 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը՝ 111,4 %, որը նախորդ տարվա համեմատ աճել է :

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 597.2 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 784.4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 131.3%, որը նախորդ տարվա համեմատ նույնպես աճել է:

4) Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2016թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 1415.0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 1239.6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 87,6 % ,այդ թվում պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումը նախատեցված է 375.3 հազ. դրամ,որը այս եռամսյակում չի տրվել անհրաժեշտություն չլինելու պատճառով:

5) Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ

Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 40929,5 հազ. դրամը հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0%, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները՝ 39928,1 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100,0%,այլ դոտացիան՝ 1001.4 հազ. դրամ, որը նույնպես տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100,0%:

2. Բյուջեի Ֆոնդային մասի եկամուտները

1) Բյուջեի Ֆոնդային մասի եկամուտները նախատեսված էր 70,0 հազ. դրամ,այն տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100 %:

3. Բյուջեի վարչական մասի ծախսերը

Բյուջեի վարչական մասի 2016թ-ի բյուջեի ծախսերը երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 52243.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսվել է 41921.8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 802 %:

1) Ըստ գործառնական դասակարգման ծախսերը կատարվել են՝

ա) Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը 2016 թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված 33788.0 դրամի դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 26989.1 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 79,8 %.

բ) զբոսաշրջության համար նախատեսված էր 100,0 հազ.դրամ, որը տրվել է ամբողջությամբ.

գ) շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 3650,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 2660,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 72.9 % ,այդ ծախսը կատարվել է համայնքի աղբահանությունը իրականացնելու համար.

դ) բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության՝ այդ թվում փողոցների լուսավորության գծով ծախսերը 1350,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 620,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 45.9 %.

ե) կրթության համար 11395,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 10494,0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 92.1 %, այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 8020.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս կատարվել է 6474.0հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 84.7 %,արտադպրոցական դաստիարակության համար նախատեսված էր 3100,0 հազ. դրամ, որի համար փաստացի ծախսը կատարվել է 2795,0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 90.2 %, իսկ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների գծով ծախսերը նախատեսված էր 275,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 220.0 հազ. դրամ, կատարման տակոսը՝ 80.0 % .

զ) սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 2000.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել 1805.0 հազ. դրամ: կատարման տակոսը՝ 90.2 % .

է) պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջեկատարվող հատկացումը նախատեսված էր 375,3 հազ. դրամ, սակայն այն չի տրամադրվել անհրաժեշտություն չլինելու պատճառով:

2)Ըստ տնտեսագիտական դասակարգման 2016 թ-ի բյուջեն երկրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված ծախսերը կատարվել են՝

ա) Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ նախատեսված 27810,0 հազ. դրամի փոխարեն կատարվել է ծախս՝ 22918,7 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 82,4 %.

բ) ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսերը նախատեսված 7033,0 հազ. դրամի դիմաց կատարվել է փաստացի ծախս 5069,3 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 71,9 %.

գ) ընթացիկ դրամաշնորհները համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ նախատեսված էր 14770.0 հազ. դրամ,փաստացի կատարվել է 12029,0 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 81,4 %.

դ) սոցիալական ապահովագրության ծախսերը՝ այդ թվում բյուջեից այլ նպաստները նախատեսված էր 2000.0 հազ. դրամ, փաստացի կատարվել է 1805,0 հազ. դրամ ծախս.

ե) այլ ծախսերը նախատեսված էր 350,0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 100,0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 28,6 %:

3. Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները

Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները առաջացել են հողի իրացումից՝24,0 հազ. դրամ, տարեսկզբի ազատ մնացորդից՝ 1924,4 հազ դրամ և կապիտալ ոչ պաշտոնական տրանսֆերտներ՝70,0 հազ. դրամ:

4. Բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

Թումանյան համայնքի 2016թ.-ի երկրորդ եռամսյակի ընթացքում բյուջեի ֆոնդային մասով նախատեսված էր 2393,8 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս կատարվել 286,5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 11,8 %:

1) Վարչական սարքավորումների ձեռք բերման համար նախատեսված էր1661,9 հազ.դրամ, փաստացի ծախս կատարվել է 159,7 հազ դրամ կամ կատարման տոկոսը՝9,6 %:
2) Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման համար նախատեսված էր 70,0 հազ. դրամ ծախս, սակայն փաստացի ծախս չի կատարվել:
3) Ջրամատակարարման համար նախատեսված էր 126,8 հազ. դրամ ծախս, այն կատարվել է ամբողջությամբ:

5. Համայնքի բյուջեի հավելուրդը կամ պակասուրդը (դեֆիցիտը)

Համայնքի բյուջեի բյուջերի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 1924,4 հազ. դրամ, որը ուղղված է բյուջեի ֆոնդային մասի ծախսերին:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 45-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 23.10.2000թ. թիվ 656 որոշման 9-րդ կետով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի հողերի փոփոխությունների վերաբերյալ հողաշինարարի կողմից տրված տեղեկանքը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Թումանյան համայնքի հողային հաշվեկշիռը 2016թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմում է՝29909,360 հա,համաձայն տեղեկանքի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ
3. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Տեղեկանք

հողերի փոփոխությունների վերաբերյալ

Համայնք *Թումանյան* (անվանում) *417* (կոդ)

Ըստ նպատակային նշանակության *(հեկտարներով)*

N	նպատակային նշանակությունը	եղել է ըստ 01.07.2015թ. Հաշվարկման	ավելացել է հաշիվ: գյուղատնտեսական	բնակավայրերի	արդյունաբերության, ընդերքօգտագործման և էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հատուկ պահպանվող հողերի	հատուկ նշանակության	անտառային	ջրային	պահուստային	ճշգրիտ է	Ընդամենը ավելացել է (2+..+11)	պակասել է և անցել: գյուղատնտեսական	բնակավայրերի	արդյունաբերության, ընդերքօգտագործման և էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հատուկ պահպանվող հողերի	հատուկ նշանակության	անտառային	ջրային	պահուստային	ճշգրիտ է	Ընդամենը պակասել է (13+..+22)	Առկա է 01.07.2016թ. Ընթացիկ հաշվառմամբ
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
1	գյուղատնտեսական	13839.449											0.000				0.010							0.010	13839.439
2	բնակավայրերի	559.920											0.000				0.030							0.030	559.890
3	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական	76.582											0.000				0.010							0.010	76.572
4	էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	32.339	0.010	0.030	0.010								0.050											0.000	32.389
5	հատուկ պահպանվող հողերի	77.130											0.000											0.000	77.130
6	հատուկ նշանակության	0.000											0.000											0.000	0.000
7	անտառային	15203.008											0.000											0.000	15203.008
8	ջրային	120.882											0.000												120.882
9	պահուստային	0.000											0.000											0.000	0.000
	Ընդամենը	29909.310	0.010	0.030	0.010	####	###	####	###	####	##	0.000	0.050											0.000	29909.360

Համայնքի ղեկավար՝ /ստորագրություն, կնիք/

հողաշինարար՝ /ազգանուն, ստորագրություն/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 46-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 20-րդ և 33-րդ հոդվածներով և Քաղաքացիների կողմից համայնքի ղեկավարին և ավագանու անդամներին հասցեագրված դիմում-բողոքների քննարկման ոլորտում վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու, քաղաքացիների ընդունելության ընթացակարգը բարելավելու և ավագանու դերակատարության ու պատասխանատվության բարձրացման նպատակով՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Թումանյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի 1-ի:
2.Հաստատել ընդունելության համար դիմած քաղաքացիների համար լրացվող ուղղորդող թերթիկի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:
3.Հաստատել ընդունելության նախնական գրանցման համար դիմած քաղաքացիների գրանցման քարտի ձևը՝ համաձայն հավելված 3-ի:
4.Սույն որոշումը և քաղաքացիների ընդունելության օրերի և ժամերի մասին տեղեկատվությունը փակցնել Թումանյանի համայնքապետարանի և համայնքի կազմում գտնվող բոլոր բնակավայրերի վարչական շենքերում՝ քաղաքացիների համար տեսանելի վայրում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել համայնքի ղեկավար Լևոն Զավարյանին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ
3. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Թումանյան
համայնքի ավագանու 2016թ.
հուլիսի 12-ի 46-Ա որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Սույն կարգը սահմանում է ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի և ավագանու (այսուհետ՝ ՏԻՄ- երի) կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման ընթացակարգը:
2. Թումանյան համայնքի աշխատակազմի քարտուղարը կազմակերպում և մասնակցում է համայնքապետարանում ՏԻՄ –երի կողմից քաղաքացիների ընդունելությանը:
3. Քաղաքացիների ընդունելությունն անցկացվում է .
   ա) համայնքի ավագանու կողմից ամեն ամսվա վերջին շաբաթվա ուրբաթ օրը՝ ժամը 9:00- ից մինչև 12 : 00-ն:
   բ) համայնքի ղեկավարի կողմից՝ ամեն շաբաթվա ուրբաթ օրը՝ ժամը 9:00-ից մինչև 12:00-ն :

4. Համայնքի ՏԻՄ –երն ընդունում են այն քաղաքացիներին, ովքեր ունեն իրենց դիմումը, բողոքը, առաջարկությունը, օրենքով սահմանված կարգով ներկայացրել են համայնքի ՏԻՄ –երին և դրա վերաբերյալ սահմանված ժամկետում պատասխան չեն ստացել կամ գտնում են, որ ստացված պատասխանը հիմնավոր չէ և այդ պատճառով իրենք ցանկանում են ՏԻՄ –երին անձամբ ներկայացնել վիճարկման առնչության իրենց նկատառումները, ինչպես նաև այն քաղաքացիներին, որոնք իրենց հուզող հարցով առաջին անգամ են դիմում:

5.ՏԻՄ–երի կողմից անցկավող քաղաքացիների ընդունելությանը՝ քաղաքացիների բարձրացրած հարցերի բնույթից կախված, անհրաժեշտության դեպքում կարող են մասնակցել նաև աշխատակազմի համապատասխան մասնագետը,վարչական ներկայացուցիչը, պատասխանատու մասնագետը կամ համապատասխան կազմակերպության ներկայացուցիչը :

6. ՏԻՄ–երի կողմից քաղաքացիների ընդունելությունը նախապատրաստում է համայնքի ղեկավարի որոշմամբ կամ աշխատակազմի քարտուղարի հրամանով նշանակված պաշտոնատար անձը , որը՝

ա) կատարում է քաղաքացիների գրանցում, ապահովում է ընդունելության համար դիմած քաղաքացիների ուղղորդող թերթիկի լրացումը՝ համաձայն

հավելված 2 –ի.

բ) կատարում է քաղաքացիների նախնական գրանցում, ապահովում է ընդունելության համար դիմած քաղաքացիների գրացման քարտի լրացումը՝ համաձայն հավելված 3 –ի.

գ) ընդունելության ընթացքում ստացված դիմումները, բողոքները, առաջարկությունները, դրանց վերաբերյալ տրված հանձնարարականները , քաղաքացիների ընդունելության գրանցման քարտերը փոխանցում է աշխատակազմի քարտուղարին:

7. Քաղաքացիներն ընդունելության նախնական գրանցման համար կարող են դիմել հեռախոսով,առցանց կամ անձամբ:

Քաղաքացիներն իրենց դիմումը, բողոքը և առաջարկությունը կարող են ներկայացնել և գրավոր և բանավոր և առցանց:

8. ՏԻՄ–երի կողմից քննարկման ենթակա չեն դատական մարմինների վարույթում գտնվող և դատարանների վճիռներով լուծում ստացած հարցերի վերաբերյալ քաղաքացիների դիմումներն ու բողոքները:

9. Քաղաքացիների դիմումները և բողոքները քննարկվում են <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով, իսկ առաջարկությունները՝ <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները, բողոքները քննարկելու մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հարցը նույն պահին լուծում (կամ պարզաբանում) ստանալու դեպքում այդ մասին նշում է կատարվում սույն կարգի 6 –րդ կետի <ա> ենթակետում նշված ձևաթղթում:

10. Եթե քաղաքացու կողմից առաջադրված հարցը չի վերաբերվում ՏԻՄ–երի գործառություններին, ապա քաղաքացուն խորհրդատվություն է տրվում, թե որ մարմնի իրավասությանն է վերաբերում տվյալ հարցը:

11. Քաղաքացիների դիմումների ու բողոքների ընթացքը համարվում է ավարտված, երբ՝ ըստ էության , ձեռնարկված միջոցների մասին տեղեկացվել է քաղաքացուն: Պատասխանը տրվում է գրավոր, կամ քաղաքացու համաձայնությամբ, բանավոր, ինչպես նաև առցանց:

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի Թումանյան
համայնքի ավագանու 2016թ.
հուլիսի 12-ի թիվ 46-Ա որոշման

Թերթիկ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՈՐԴՈՂ

Դիմելու ամսաթիվը «_____» _____2016 թ.

Ընդունելության ամսաթիվը «_____» _____2016 թ.

Ընդունելություն կատարողը _____

Դիմող՝ _____

ազգանուն , անուն, հայրանուն ստորագրություն

_____

հասցե, էլ.փոստ ,հեռախոս

_____

աշխատանքի վայրը,պաշտոնը

Եթե ցանկանում եք պատասխանը ստանալ էլ.ցանցով ընդգծեք՝ այո ոչ
Հարցի համառոտ բովանդակությունը _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Մակագրությունը (ինչ է հանձնարարված)_____

_____

Կատարող՝ _____

Հսկողական նշումներ _____

Թումանյանի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ _____. Ռուզաննա Շահվերդյան

Հավելված 3
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի
ավագանու 2016թ. հուլիսի 12-ի 46-Ա որոշման.

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՔԱՐՏ

N —— ընդունման ամսաթիվը << ——>> ————————20 թ.

Դիմողի ———————————— ———————— ————————
ազգանունը, անունը, հայրանունը

Հասցեն ————————————————————————————

Դիմումի բովանդակությունը ————————————————

————————————————————————————————

————————————————————————————————

————————————————————————————————

Ընդունելությունը վարողի ազգանունը ————————————

————————————————————————————————

Եզրակացություն ——————————————————

————————————————————————————————

————————————————————————————————

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 47-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հ Հ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հ Հ օրենքի 60-րդ հոդվածով՝ Թումանյան համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Թումանյան համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը՝համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ
3. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու
2016 թվականի հուլիսի 12-ի N 47 —Ա որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Թումանյան համայնքի ղեկավարին (այսուհետև՝ համայնքի ղեկավար) վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համայնքի ղեկավարը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով թվարկված և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով վերապահված կամավոր լիազորություններ: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները՝

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

1) Աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.

2) Աջակցում է զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը.

3)Աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

1) Իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.

2) Իրականացնում է կառուցապատման աշխատանքները.

3) Կազմում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված, ըստ անհրաժեշտության մշակվող, քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը.

4) Կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը.

5) Կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

1) Իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.

2) Իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

1) Կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարությունը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

1) Աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.

2) Աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը.

3) Հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը.

4) Աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը.

5) Աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

1) Աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը.

2) Աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը.

3) Նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծում է հանգստի գոտիներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

1) Նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.

2) Միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

1) Աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.

2) Աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին:

3. Յուրաքանչյուր տարի կամավոր լիազորությունների իրականացման համար կարող է նախատեսվել ֆինանսական միջոցներ, որը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 15 -%-ը:

4. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար պահանջվում է ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների դեպքերում:

5. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

6. Կամավոր լիազորությունների իրականացման առաջարկություն կարող են նախաձեռնել համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

7.Համայնքի ղեկավարը զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման , հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ համայնքի ավագանու անդամները, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչները, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետները, ինչպես նաև համայնքի բնակիչները և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

8. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համայնքի ղեկավարին վերապահված այլ կամավոր լիազորությունների իրականացման համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

9.Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման ,

հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները համայնքի ղեկավարի կողմից քննարկվում և տրվում է միայն հանձնաժողովի կողմից կամավոր լիազորության իրականացման եզրակացության և անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության հիմնավորման առկայության դեպքում:

10. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է 30000 հազար դրամ:Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնության կարող է հատկացվել առավելագույնը 2 անգամ, որի չափը չի կարող գերազանցել սոցիալական օգնության առավելագույն չափի 1,5-պատիկի չափը: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց,համայնքի ավագանուն, համայնքի ղեկավարի,համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին և համայնքի ղեկավարի մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա):

11. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան 1 անգամ՝ ոչ ավելի քան տարեկան ուսման վարձի 10%-ի չափով: Արգելվում է ուսման վարձի հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց,համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին, մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա), եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 48-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.
Հանձնաժողովի նախագահ՝ Երվանդ Աշխարհբեկի Շաքարյան-համայնքի ղեկավարի տեղակալ
Հանձնաժողովի անդամ՝ Ռուզաննա Գուրգենի Շահվերդյան-Թումանյանի համայնքապետարնի աշխատակազմի քարտուղար
----//---- Տիգրան Սամվելի Մխիթարյան -ավագանու անդամ
----//---- Անահիտ Հովհաննեսի Ռամազյան-Թումանյանի միջնակարգ դպրոցի տնօրեն
----//---- Դավիթ Վանիկի Սարգսյան- Լորուտի միջնակարգ դպրոցի տնօրեն
----//---- Ստեփան Արտեմի Վարոսյան- Թումանյանի առողջության կենտրոնի տնօրեն
----//---- Անուշ Սուրենի Ղալայան- ք. Ալավերդու մանկաբույժ
----//---- Էդիկ Երջանիկի Բեժանյան - անչափահասների գծով տեսուչ
----//---- Անահիտ Նորայրի Արզումանյան - Թումանյանի համայնքապետարնի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ
3. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒԼԻՍԻ 2016թվականի N 49-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի առաջին կետով և առաջնորդվելով Թումանյան համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 27-ի<<Թումանյան համայնքի 2016թվականի բյուջեն հաստատելու մասին >> թիվ 30 - Ն որոշմամբ ՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է .

Վարչական մասի եկամուտներում կատարել փոփոխություններ՝
1.Ավելացնել <<Պահուստային ֆոնդից ֆանդային բյուջե կատարվող հատկացումը>> 4989.0 հազ. դրամով.
Վարչական մասի ծախսերում կատարել փոփոխություններ՝
1.Կառավարման ապարատի նախահաշվի <<Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը>>(հոդ 4222)-ի համար նախատեսել 171.0 հազ. դրամ.
2. Ավելացնել 1.6.1 դասակարգման <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով >> ծախսերը <<Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման համար>> (հոդ.4251) 260,0 հազ.դրամ, <<Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում>> (հոդ.5113) 2467,0 հազ.դրամ.
3. Ավելացնել 4.5.1 դասակարգման<< Ճանապարհային տնտեսության>> համար նախատեսված ծախսերը <<Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում >> (հոդ.4251) 260,0 հազ.դրամ .
4. Ավելացնել 5.1.1 դասակարգման << Աղբահանության>> համար նախատեսված դրամաշնորհները(հոդ.4637) 280,0 հազ.դրամ .
5. Ավելացնել 6.3.1 դասակարգման << Ջրամատակարարման>> համար նախատեսված ծախսերը <<Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում >>(հոդ.4251) 600,0 հազ.դրամ .
6.Ավելացնել 9.1.1 դասակարգման << Նախադպրոցական կրթության>> համար նախատեսված դրամաշնորհները(հոդ.4637) 240,0 հազ.դրամ ,<<Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում >>(հոդ.5113) 2522,0 հազ.դրամ .
7. Ավելացնել 9.5.1 դասակարգման << Արտադպրոցական կրթության>> համար նախատեսված դրամաշնորհները(հոդ.4637) 240,0 հազ.դրամ.
8. Պակասեցնել 10.7.1 դասակարգման << Սոցիալական հատուկ արտոնություններ այլ դասերին չպատկանող>> նախատեսված ծախսերը <<Այլ նպաստներ բյուջե (հոդ.4729) 1085,0 հազ.դրամ.
9. Պակասեցնել 11.1.2 դասակարգման << Պահուստային ֆոնդը>> (հոդ.4891) 7330,0 հազ.դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ

2. ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ

3. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՐԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ